ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 մարտ 2016թվականի N 37- Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի
N03 (ԱՐՏԱՀԵՐԹ) ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի մարտի 18-ի N03 (արտահերթ) նիստի օրակարգը՝

1) Բյուրեղավանի քաղաքային համայնքի 2015թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին,

2) Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 11-ի N 127- Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,

3) Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Սամվել Վարդանյան փողոց 24/60 հասցեի գույքն ուղղակի վաճառքով օտարելու մասին,

4) Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող հողամասերի վրա կառուցված ինքնակամ շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 9 Ձեռնպահ – 0 Դեմ - 0

ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ_____

ԲԱԴԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ_____

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿԱՋ_____

ԽԱՆՋԱԴՅԱՆ ԱՐՄԱՆ_____

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ_____

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ_____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ_____

ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ_____

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 մարտ 2016թվականի N 38 -Ն

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16–րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով՝ ավագանին որոշում է.
1.Հաստատել Բյուրեղավանի համայնքի 2015 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ եկամուտների մասով՝ 213741.5հազար դրամ, ծախսերի մասով՝ 201852.1հազար դրամ, տարեվերջի ազատ մնացորդ՝ 6565,8հազար դրամ՝ համաձայն N1, N2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ – 9 Ձեռնպահ – 0 Դեմ - 0

ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ_____

ԲԱԴԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ_____

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿԱՋ_____

ԽԱՆՋԱԴՅԱՆ ԱՐՄԱՆ_____

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ_____

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ_____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ_____

ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ_____

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտ 2016թվականի N 39 -Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N127-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին , 3-րդ կետերով և 5-րդ մասով՝ ավագանին որոշում է.

1. Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 11-ի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու, գործունեության կարգը սահմանելու և հանրային բաց լսումներ կազմակերպելու մասին» N 127-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝

1) որոշման 1-ին կետի 1)ենթակետում «քաղաքապետարանի» բառը փոխարինել «համայնքապետարանի» բառով:

2) որոշման 1-ին կետի 4) ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4) բնակիչներ՝ Գրենա Զաքարյան(համաձայնությամբ),
Արմեն Ավագյան (համաձայնությամբ),
Հարություն Ծատուրյան (համաձայնությամբ),
Մարիետա Թումանյան (համաձայնությամբ),
Էդգար Հարությունյան (համաձայնությամբ),
Աբել Իսրայելյան (համաձայնությամբ),
Լյուբով Պիր - Բուդաղյան (համաձայնությամբ),
Երջանիկ Թովմասյան (համաձայնությամբ),
Վաչագան Հովհաննիսյան (համաձայնությամբ),
Սուսաննա Միրոյան (համաձայնությամբ),
Եղիշ Պողոսյան (համաձայնությամբ)
Լիլիթ Եղիազարյան (համաձայնությամբ» :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 9 Ձեռնպահ – 0 Դեմ - 0

ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ_____

ԲԱԴԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ_____

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿԱՋ_____

ԽԱՆՋԱԴՅԱՆ ԱՐՄԱՆ_____

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ_____

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ_____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ_____

ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ_____

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 մարտ 2016թվականի N 40 -Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՓՈՂՈՑ 24/60 ՀԱՍՑԵԻ ԳՈՒՅՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1.1 կետով, 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետով, 2006 թվականի մայիսի 18-ի №912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 34.2 կետով, 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով, հիմք ընդունելով Բյուրեղավան քաղաքի 24 շենքի 41 բնակարանի բնակիչ Փառանձեմ Ռաֆիկի Ոսկանյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1. Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող (վկայական N02032016-07-0038, գաղտնաբառ՝ ZGX7CUEAEAAT) Սամվել Վարդանյանի փողոց 24/60 հասցեում գտնվող 33.62ք.մ արտաքին մակերեսով (ներքին մակերես 30.48քմ.) ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակությամբ ավտոտնակն ու 0.44ք.մ մակերեսով ծածկը 71526 (յոթանասունմեկ հազար հինգ հարյուր քսանվեց) դրամով և դրանց զբաղեցրած 0.003406 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ (ծածկագիր 07-003-0030-0031) հողամասը 100136 (մեկ հարյուր հազար մեկ հարյուր երեսունվեց) դրամով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Բյուրեղավան քաղաքի 24 շենքի 41 բնակարանի բնակիչ Փառանձեմ Ռաֆիկի Ոսկանյանին:
2. Նշված գույքը դուրս գրել Բյուրեղավանի քաղաքային համայնքի հաշվեկշռից:
3. Պայմանագրի վավերացման և գրանցման ծախսերը թողնել Փառանձեմ Ռաֆիկի Ոսկանյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 9 Ձեռնպահ – 0 Դեմ - 0

ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ_____

ԲԱԴԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ_____

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿԱՋ_____

ԽԱՆՋԱԴՅԱՆ ԱՐՄԱՆ_____

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ_____

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ_____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ_____

ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ_____

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 մարտ 2016թվականի N 41 -Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ ավագանին որոշում է.

1.2016 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2386-Ն որոշման համաձայն Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացվող ինքնակամ շինությունները:
2.Սահմանել, որ Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում դրանք վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Բյուրեղավանի քաղաքապետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում մրցույթի ժամանակ որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 9 Ձեռնպահ – 0 Դեմ - 0

ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ_____

ԲԱԴԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ_____

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿԱՋ_____

ԽԱՆՋԱԴՅԱՆ ԱՐՄԱՆ_____

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ_____

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ_____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ_____

ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ_____

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ